ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Մինասյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծի 1-ին հոդվածով սահմանվում է ապահովագրական ընկերությունների կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրավճարների 2011 թվականի համար նախատեսված մասի 15 տոկոսի 2012 թվականի առաջին եռամսյակի ընթացքում երաշխավորման ֆոնդ փոխանցելու պարտականություն՝ ինչն ըստ էության ապահովագրական ընկերությունների համար երաշխավորման ֆոնդ լրացուցիչ վճարներ կատարելու պարտավորություն է:

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ ապահովագրական ընկերությունները լրացուցիչ վճարները կատարում են միայն այն դեպքում, եթե երաշխավորման ֆոնդի միջոցները բավարար չեն (բավարար չեն լինի) օրենքով սահմանված հատուցումները վճարելու կամ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումները կատարելու համար:

AJV-42-14_2011-10-27_01d10.1d17589-11_2011-10-28

Հետևաբար օրենսդիրն արդեն սահմանել է երաշխավորման ֆոնդ լրացուցիչ վճարներ կատարելու դեպքերը:

Միևնույն ժամանակ կարծում ենք, որ ընթացիկ տարվա համար արդեն իսկ սահմանված «խաղի կանոնների» փոփոխությունն օրենսդրորեն կարող է վատ նախադեպ հանդիսանալ ֆինանսական ոլորտի հետագա գործունեության և կայուն զարգացման տեսանկյունից՝ բացասական ազդակներ հաղորդելով Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում ներդրումներ կատարելու ցանկություն ունեցող արտաքին ներդրողներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում տվյալ տարվա համար սահմանված կանոններում փոփոխություններ կատարելու առաջարկը:

Ինչ վերաբերում է նախագծի 2-րդ հոդվածով սահմանվող քանակական սահամանափակմանը, ապա այս խնդիրը ևս արդեն իսկ լուծված է գործող օրենքով, և այն վերապահված է ինքնակարգավորվող մարմնին՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ընկերությունների բյուրոյին, որը կոլեգիալ մարմին է և ունի անհրաժեշտության դեպքում իր կանոններում, այդ թվում՝ և սահմանված սակագներում, փոփոխություններ կատարելու իրավասություն: Հետևաբար, օրենքով կոշտ սահմանափակում դնելը ներկայիս արագ փոփոխվող ֆինանսական աշխարհի պայմաններում չի բխում ֆինանսական համակարգերի զարգացման հայեցակետից:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1. նախագծում ավելացնել դրույթ, որով պարտադիր պահանջ կսահմանվի ապահովագրական ընկերությունների համար հասարակությանը ԱՊՊԱ պոլիսներն էլեկտրոնային կարգով վաճառքի հնարավորություն ընձեռելու համար: Կարծում ենք վերջինս կնվազեցնի մատուցվող ծառայությունների ծախսերը՝ հետևաբար և բեռնվածության ցուցանիշը.

2. քննարկել ԱՊՊԱ շուկայում գերիշխող դիրք (30 տոկոս և ավելի) ունեցող ապահովագրական ընկերությունների համար երաշխիքային հիմնադրամին վճարվող գումարների չափի համար ավելի բարձր գործակցի կիրառման հարցը: Վերջինս հիմնավորվում է այն փաստարկով, որ շուկայում գերիշխող դիրք ունեցողների համար համակարգային ռիսկը հարաբերականորեն բարձր է, հետևաբար նույն չափի վճարների կատարումը տարբեր համակարգային ռիսկ ունեցող ընկերությունների կողմից կարող է խեղաթյուրում մտցնել:

Ելնելով շարադրածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագիծը լրամշակման կարիք ունի և ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվելուց հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի/այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի չեզոք ազդեցություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության

բնագավառում կարգավորման

1.«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***բացասական*** ազդեցություն, քանի որ Նախագծով նախատեսվում է, որ Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները երաշխավորման ֆոնդ միանվագ փոխանցելու են ԱՊՊԱ պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրավճարների 2011 թվականի համար նախատեսված մասի 15 տոկոսը: Արդյունքում ապահովագրական ընկերությունները զրկվում են 2011թ. ապահովագրավճարներից ստացված շահույթի ինքնուրույն տնօրինելու իրավունքից, ինչը էական բացասական ազդեցություն կունենա ապահովագրական համակարգի կայացման գործընթացի վրա: Միևնույն ժամանակ Նախագծով առաջարկվող 75/25 տոկոս հարաբերակցության փոփոխությունը ժամանակավրեպ է, քանի որ դեռևս պարզ չէ, թե համակարգի զարգացման ընթացքում որքանով կփոխվի պատահարների դիմաց հատուցումների մեծության շեմը: Միևնույն ժամանակ, չի բացառվում, որ մինչ 2011թ. ավարտը տվյալ հատուցումների մակարդակը կունենա աճի միտում: Բացի այդ, հաշվի առնելով միջազգային պրակտիկան, պատահարների դիմաց հատուցումների իրական միտումները հնարավոր է ստանալ համակարգի ներդրման պահից առնվազն երեք տարի անց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ ՀՀ կառավարության 10.09.2009թ. N 1021-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն բյուջետային բնագավառում ազդեցության գնահատման վերաբերյալ

1. Նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման առարկան և արդյունքները.

Նախագծով նախատեսվում է հստակեցնել Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրավճարների 2011թ. համար նախատեսված միջոցների օգտագործման ուղղությունները:

2. Նորմատիվ իրավական ակտերի նախագծի ընդունման կամ չընդունման դեպքում՝ դրանց կիրարկման արդյունքում նախատեսվող հետևանքները և բյուջետային բնագավառի վրա դրանց ազդեցությունն ըստ ժամկետների.

Նկատի ունենալով, որ նախատեսվում է հստակեցնել Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրավճարների 2011թ. համար նախատեսված միջոցների օգտագործման ուղղությունները, գտնում ենք, որ Նախագծի ընդունման կամ չընդունման դեպքում ՀՀ պետական բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն առաջանում:

Նախագիծ
Պ-1245-26.09.2011-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-63-Ն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետեւ՝ օրենք) 54-րդ հոդվածը լրացնել հետեւյալ խմբագրությամբ նոր 19-րդ մասով՝

«19. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններն իրենց կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրավճարների 2011 թվականի համար նախատեսված մասի 15 տոկոսը 2012 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պետք է փոխանցեն երաշխավորման ֆոնդ: »:

Հոդված 2. Սույն օրենքի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանություն» հավելվածի 2.2 կետի 6) ենթակետում «գործակից» բառից հետո ավելացնել «, ընդ որում, բեռնվածության գործակիցը առնվազն երեք անգամ պետք է փոքր լինի զուտ (նետտո) սակագնից»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

2011 թվականի համար ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության բյուրոյի կողմից հաշվարկված սակագնի կառուցվածքում պատահարների դիմաց հատուցումների համար նախատեսված էր հավաքագրված գումարների 75%-ը, իսկ բեռնվածության համար՝ 25%: Ընդ որում, բեռնվածության բաղադրիչներն են՝ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերության կողմից կարտարվելիք բոլոր ծախսերը (այդ թվում՝ ապահովագրական գործակալներին վճարվող միջնորդավճարները), ապահովագրավճարներից Բյուրո կարատրվող մասհանումները եւ ապահովագրական ընկերության կողմից ակնկալվող շահույթի մեծությունը:

Բյուրոն 2011 թվականի համար ԱՊՊԱ ոլորտում հիմնական ապահովագրավճարների նվազագույն եւ առավելագույն չափերը սահմանելիս հաշվի առնելով ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվական համակարգի թերի լինելը, նպատակ ունենալով ապահովել մեծ կայունություն նոր ներդրվող ԱՊՊԱ համակարգի համար, սահմանել էր հիմնական ապահովագրավճարների նվազագույն եւ առավելագույն հետեւյալ չափերը՝ նվազագույն՝ 31.848 ՀՀ դրամ, առավելագույն՝ 33.122 ՀՀ դրամ:

2011 թվականի առաջին ութ ամիսների արդյունքներով պատահարների դիմաց հատուցումների (վնասաբերության) մակարդակը կազմել է 47.93%: Կարելի է կանխատեսել, որ այս մակարդակը մինչեւ տարեվերջ էական փոփոխությունների չի ենթարկվի:

Հաշվի առնելով ընթացիկ տարում ապահովագրական ընկերություններում ֆինանսական հսքերի առումով ստեղծված իրավիճակը առաջարկվում է 2011 թվականի համար հավաքագրված ապահովագրական վճարների 15 %-ը փոխանցել երաշխավորման ֆոնդ:

Առաջարկության արդյունքում էապես կմեծանան երաշխավորման ֆոնդի միջոցները՝ ապահովելով համակարգի առավել մեծ կայունություն, իսկ ապահովագրական ընկերությունները կազատվեն առաջիկա տարիների ընթացքում երաշխավորման ֆոնդ համապատասխան պարբերական վճարներ կատարելու անհրաժեշտությունից:

Միաժամանակ ապահովագրական ընկերությունները կունենան բավականաչափ միջոցներ համակարգի ներդրման առաջին տարով պայմանավորված լրացուցիչ ծախսերը կատարելու համար:

Օրենքի հավելվածում առաջարկվող լրացումը նպատակ ունի օրենսդրորեն սահմանել

սակագնի հաշվարկման փուլում բեռնվածության առավելագույն մակարդակը:

Առաջարկվում է հավաքագրված միջոցների առնվազն 75%-ն ուղղել ավտոտրանսպորտային պատահարների արդյունքում անհրաժեշտ հատուցումներին, իսկ 25 %-ը՝ այդ գործընթացի կազմակերպմանը: Անհրաժեշտ է նշել, որ միջազգային փորձը եւս՝ մասնավորապես ԱՄՆ-ի եւ Եվրոմիության երկրների համար, նման համամասնության օգտին է խոսում:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն համակարգը, որ ընկերությունները հավաքագրված միջոցները ծախսում են ոչ միաժամանակ եւ հնարավորություն ունեն դրանց ազատ մնացորդները որպես ավանդ ներդնել առեւտրային բանկերում, ինչի արդյունքում տարվա ընթացքում ստանալ հավաքագրված միջոցների շուրջ 5 %-ի չափով լրացուցիչ միջոցներ իրենց գործունեությունը կազմակերպելու համար: